


1149

L K. 6

586







# ՃԱՇԱԿ ՈՍԿԵՂԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ

ԸՆԴ ԽՆԱՄՈՎ,

Ա. ՄԱՏԱԹԻԱՅ ԳԵՐԱԴԵՋԵՐԵՐԻ ԵՐ. Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

ԹԻՒ Ա. — 1 ՑՈՒՆՎԱՐ




Ի Կ. ՊՈԼԻԱ

Ա. ՑՈՒՆՎԱՐ ԳՈՒՐԳԵՆԻ

1886.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ




ԱԶԳ Ի ԽՐԱՄԱԿԱԼՈՅ ՀԱՆԳԻՍԵՍ



## ՊԱՏՄԱԿԱՆ

ԶՅՈՒՄԱՆԻԱՆ ։ . . . . . Օ. Մ. Գ.



## ԳԻՏԵԱԿԱՆ


ԹԻ ԻԳԵՐ ԲՅԱԼԻՔՐ Ի ԼՈՒՆԻ ։ . . . . . Յ. Գ.



## ԹԱՆԱՅԻՐԱԿԱՆ

Ա.ՅՈՒԱՆԻՅ ԲԱՐԵԱՐ Ի ԺԱՆՄԱՅԱԿ ։ . . . . . Յ. Գ.

Ա.ՅՈՒԱՆԻՅ ԲԱՐԵԱՐ ՀԱՅԵՐԵՆ ՂԵՂՈՒԻ ։ . . . . . Յ. Գ.



## ՊԱՅՄԱՆՔ

Ա. Գին միամեաց բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դարէկան սույնոց, հաստացանելի կանիխու .

Ե. Ցողիք թղթատարի ի գաւառու և յերկիր օտար՝ դաշնեկան արծոթոց է ի տարւոջ .

Գ. Զգին բաժանորդութեան, զթուզթ և լամենայն գիր առաքել սպարտ է, յանուն խնամակալոց Հանդիսիս, առ Տ. Ցողովի Գոտիովեան, զբավաճառ ի Կ. Պոլիս, ի Չաքամաքճըլոր .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է սոսնալ՝ Վ. Պոլոց :

میلادی ۱۳۹۰

تیر ۱۳۹۰

میراث اطارات جلیلستان ۹۱۰ نومروی رخصتا مدد سیله طبع اوامش در

# ՃԱՇԱԿ

ՊԱՄԵԿԱՆ ԹՊՐՈՒԹԵԱՆ

## Ա. Զ Դ

Ահաւասիկ առնեմք զոր ի քսան , կամ , թէ աւելի , յերեսուն ամաց հետէ ոչ ոք իշխեաց առնել , այն է՝ հրապարակ համել համառօս ինչ հանդէս հին հայերէն լեզուաւ : Ասացաք , ի քսան , կամ , թէ աւելի , յերեսուն ամաց հետէ . քանդի թուի մեզ թէ այնչափ ամք են , և ոչ բազմօք աւելի կամ պակաս , յորմէ հետէ դադարեաց հանդէսն որ երեւէր հին հայերէնիւ ի Հնդկաստան : Զիարդ և իցէ , փորձս յոր ձեռն արկաք՝ թուիցի բաղմաց ոչ սակաւ գարմանապի , այնու մանաւանդ զի անուանեալ Գրաբարեանքն և Սշխարհաբարեանք չեն տակաւին հաշտ , և բազում այնք են որ զհին հայերէնն համարին ի վաղուց հետէ մեռեալ և թաղեալ , իրբեւ անալիստան իմն և անզօր , առաւել քան զնորն , ի տալ գոնեաց բատ բաւականին զհանդէս արդ՝ մոսաց և խորհրդոց : Աւելորդ աշխատութիւն թուի մեզ սակայն կալ և վիճել վասն այսր , և յարուցանել զնոսակ պայքարն Աշխարհաբարեանց և Գրաբարեանց . բաւական լիցի որ ինչ ասացաւն և գրեցաւ ցարդ . արդիւնք իրացն տացեն պատասխանի : Այլ զի մի թուեսցուք պատանձեալ իմն և ամենեւին առանց պատասխանւոյ , ասասցուք միայն նախ՝ թէ հին հայերէնն ոչ է մեռեալ , այլ ննջ , և եթէ իցէ եւս մեռեալ , առ այնոսիկ միայն է որ անդէտ լեալ նմա՝ են եւս անդէտ անդին պիտանութեան նորա . երկրորդ՝ թէ աղերս նորա առ նորն չէ անկելոյ առ որ կանդունն կայ , կամ դայեկի առ սան , զոր յետ դիեցուցանելոյ առ ժամանակ մի՝ քեցէ ի ստենէ դայեակն վարձկան , և երթայ յուպէտ յուկամ . այլ է , ընդհակառակին , աղերս կանդուն կայելոյ առ անկեալ , մօր՝ առ դուսար միշտ կարօտ նորա կիսնամոց , առ որ և գոչէ իսկ մայրն ի տարակուսելն սորա և ի վարանել . Ահա մայր

քո . և երրորդ՝ թէ (եթէ ոչ բարկասցին մեղ ոմանք և տարցին ընդ միտ) առաւելրութիւն նորա ի վերայ նորոյն է այնչափ և այնպիսի , մինչեւ նորոյն կեալ և սնանել ի փշրանաց անկելց ի սեղանոյ նորա : Այսչափ ինչ առել շատ և բաւական համարեալ , որպէս ասացաք , առ ի չթուելց համր , եկեսցուք ի բուն կէտ նպատակին մերոյ :

Զիք տարակոյս թէ գոն յազգին որ հմուտ և տեղեակ են ազնուագոյն ժամանակի լեզուին հարց իւրեանց , նա՝ են խոկ կոկաթ կաթոգի ի լսել զայն որ է արդարեւ ի մնացորդո հայ հանճարոյ պատուականագոյնն և չքնաղագոյն , մանաւանդ թէ մին միայն զոր հասոյց մեզ ըստ դիմաց ամենասպառն ժամանակ : Ի հանել մեր ի ըստ զշանդէս ի հին հայ բարդառ՝ դիտաւորութիւն մեր չէ արդարեւ մեղմով իմն և հնարիւք անհետ առնել ի մատենագրութենէ զարդի հայերէնն և թողուլ զասպարէզն հնոյն միայն , որպէս էրն խոկ գրեթէ իրրեւ յիտուն ամօք յառաջ . առ այս ոչ ձեռնհաս ինչ եմք և ոչ ցանկացող . նա մանաւանդ կամիմք , և այս խոկ է ճշմարիտն և հնարաւոր , զի արդի լեզուն , իրրեւ նոր իմն ծնունդ , երթիցէ իւրուրոյն զօրութեամի տիոց ի տիս , մինչեւ հատեալ յարբունս եղիցի հուժկու , որ , յայնժամ , դիտեմք թէ չէ լինելց կարի այլակերպ և օտար ի հնոյն : Աւ փորձն մեր ոչ թէ վնասիցէ ինչ սցամ , այլ մանաւանդ մատուցէ բազում ինչ ի նպաստ :

Եկեսցուք այժմ խօսել համառօտիւ զրնութենէ և զհանգտմանաց լեզուին զոր ունելց է շանդէս : Որովհետեւ , որպէս ամենայն իրք մարդկեղէնք յընթացս դարսոց և ժամանակաց երթան և փոփոխին ի լաւէ անտի ի յոռին , և ի յոռւոյն ի լաւ անդր , մերթ վերանան ի բարձունս , և մերթ խոնարհին յանդունդս , նոյնալէս և հայերէնն յընթացս իւրոյ բազմաժամանակեան կենաց , անդստին ի ժամանուկէն զի արկաւ ընդ գրով , կրեաց փոփոխութիւնս դամ՝ քան զդամ՝ երթալով ի բարւոյն ի վաստվարն , մինչեւ յոսկւոյն զոր էր՝ լինել նմա արծաթ , պղինձ , երկաթ , անդ , կապար , մինչեւ յաղը խոկ փոխել , չէր հնար մեզ առնուլ ի տոցանէ անխոտիր , եթէ չին մեզ կամք ածել ի հանդէս ճիւազ իմն լեզ-

ուի , և այսպէս մեղքն իսկ աղարտել գանուն Հանդիսիս , «Ճաշակ Ոսկեղին Դարբութեան :» Ապա լեզուն զոր մերով-սանն ջանացուք արկանել ի կիր՝ Եղիշի լեզուն սկզբան կամ առաջնոյ կիսուն հինգերորդ դարու , այն է ժամանա-կի երանելի Թարգմանչաց մերոց , որ արդարեւ ոսկեղին ժամանակն է հայերէն դպրութեան : Այս այն լեզու է որով գրեաց մեծն Եղնիկ , պերճն Սգաթանգեղոս , ընտանին Բու-ղանդ , սքանչելին Կորիւն . այս այն լեզու է զոր ընթեռնումք հիսցեալ զարմացեալ յապուշ հարեալ ի թարգմանութիւնս նուիրական դրենոյն և գործոց հռչակաւորագունիցն ի հարց Եկեղեցւոյ , Եւսեբեայ , Բարողի , Կիւրղի , Ոսկերերանի , Սե-րերիսանու , Եփրեմայ , Յակոբայ Մծրնացւոյ : Այս այն լեզու է որոյ զհնագոյն օրինակն տեսանեմք ի հատակոտորս ինչ երգոց վիպասանաց մերոց զորս տան մեղ Խորենացին և Մադիստրոս . երգոց վիպասանաց , ասեմք , զորս հարգն մեր , զինի քրիստոնէութեանն իսկ , այնպէս «ախորժելով երգէին» , ըստ Խորենացւոյն , «սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն , և ի նոյն հանապազորդեալք » , ըստ Բուզանդայ : Այս այն լե-զու է զոր տեսանեմք թեքեալ առ ամենայն նիւթ ըստ ար-ժանի և ըստ պատշաճի . ծանր՝ յազօթս , պարզ՝ ի վարդա-պետութիւնս , քաղցր՝ ի պատմութեան , սաստիկ՝ ի յանդիմա-նութեան , մեղմ՝ ի խրատս , ծաղկալից ծաղկաւէտ՝ ի նկարա-դիրս , հոյակապ՝ ի վիպասանութեան , միշտ և յամենայնի յստակ , զգօն և վայելուշ . ի զարդարանսն համեստ , այլ չքնաղ առանց պչրելոյ և հալտելոյ : Բաւական իցէ յակն ար-կունել դամ մի զգիրս Նին և Նոր կտակարանաց : Եթէ ընդ-միմեանս հարեալ հզուեցուք զնոսա ի Ծննդոց մինչև յընդ-հանրականն Յուդայի ( ի բաց թողումք զՅայտնութիւնն որ է յետին թարգմանութիւն ) , ծիածան իմն դպրութեան ելանէ առաջի մեր , ուր զամենայն գոյնս լեզուի է տեսանել կար-գաւ իմն և ոճով զորս շիոթել անհնար է : Այս լեզու գնայ հետի իրրև պատանի առոյգ՝ ի պատմականս , որսիս ի Նըն-դամատենին , ի գիրսն Յեսուայ , Դատաւորաց , Թագաւո-րաց , Մնացորդաց և յԱւետարանս . սկիզբն առնու մեղմով թեւս տռեալ ճախրել յԱռակս , ի Գործս առաքելոց և ի


Թուղթս . տակաւ առնու ևս իմն բարձրագոյն թուիչս ի վիստասանականսն , որպէս ի Սաղմոսս , ի գիրսն Յովեայ և ի Մարդարէութիւնս . սլանայ յեւս բարձրունս , մինչև ըստ ակն անկանել , ի գիրսն Իմաստութեան և ի Մակարայեցիս . նոյնալէս է տեսանել և առ Եղնկայ , Ագամթանգեղոսի և Բուզանդաց , պէսալէս և ազգի ազգի , միանդամայն մի , առանց կորուսանելց կամ փոխելցյ զբոյս բարուցն , զճե , զկերպարանսն և զհասակ , որ են բուն հայացի :

Յասացելցյ անտի վերագոյնն , այսինքն թէ ջանալոց եմք մերովսանն արկանել ի կիր զլեզուն ոսկեղէն դարու հայ դպրութեան , դիւրին է խմանալ նախ՝ թէ լեզու Հանդիսիս լինելոց է բունն և պարզ լեզու Հայոյն , այն՝ զոր եւ պէտք եւ փիլիսոփայութիւն լեզուի պահանջեն . և ոչ անրնականն այն և ճոռոր , որ ցուցանի մանաւանդ տղիտութիւն լեզուին քան հմտութիւն , և ոչ յայլ ինչ է պիտանացու եթէ ոչ ի խանդարել զծաշակ և տալ ոչ միայն խրտչել ի լեզուէն , այլ և խորչել և գարշել , համարելով զնա իբրև առապար իմն անել և անմատոյց : Երկրորդ՝ թէ զգուշանալոց եմք չտալ մուտ , գէթ անխտիր , այնպիսի բանից և ասացուածոց որ օտար իմն են ի սովորութենէ և ի ճշշակէ մատենագրաց այնր ժամանակի , յայնց մանաւանդ որ ծնունդ են , նաև վիժածք խակ յունարենի , և զորս մարթ է կոչել յունահայ ճիւտով , որպիսի են որձեւէքքն ի բնութեան : Այս յունահայ վիժածք ի հնարագիտութենէ ոմանց գտեալ մուտ՝ սպառնացան գամ մի վեր ի վայր հարկանել զլեզուն , որպէս է տեսանել առ Դաւթի Անյաղթի . այլ , որպէս հաւանութեան է , կարի իմն օտարոտի և անհեթեթ երեւեալ բազմոց՝ ոչ կարացին ընդգելանել լեզուին , և անկան ի սովորութենէ , բաց ի սակաւ անուանց և բանից , որպիսի են բաղդադրել , բաղդադրել , վերծանել , շրաբութել , որբանդրել , ասկաբեթել , որբանդրել . կամ ուսմանց ինչ անուանք որ ելին ի նմին դարբնոցէ , որպէս +երկանունէն , +երենուն , +երենուած , որու , եռակի , յունահակի : Ոչ թէ կամիմք արտաքսել զսոսս ի մատենագրութենէ , մանաւանդ զկարի սովորականսն , այլ կամիմք որչափ հնար է՝ զգուշանալ ի սոցունց և ի նմանեաց . վասն զի , որպէս ասացաք , դի-

տաւորութիւն մեր է տալ զանխառն լեզու ոսկեղբն դարուն մատենագրութեան , մանաւանդ զի ունի և ոսկեղբնն մատենագրութիւն , փոխանակ եկամտիցն այնոցիկ որ յիշեցան , զիւրսն , բունս և հարազատ , զորս մի ըստ միոջէ յիշել չէ տեղլոյս : Ոչ խտրեսցուք սակայն արկանել ի կիր առանց խողելոյ արդի անուանս գիտութեանց և արուեստից և հասարակաց ինչ պիտոյից որ արդի ժամանակի են դիւտք , թէ՛ զնորամուտսն , որ չեն օտար ի բնութենէ և ի ճաշակէ հայ լեզուի , որպիսի են շնչենաս , Երկանուդէ , հեռագիր , նղնադրար , նամակադրուան , բաղարան , լուսանկար , նղնանձն , ջրածն , և այլ բազումք , և թէ զհինս՝ որոց առումն է նոր , որպէս՝ աշխարհացոյց , հրացան , լուսաբեր , սորիկանունիւն , զբանաւոր , պատուաստ , ծաղկի , այլովքն հանդերձ :

Ակն ունիմք թէ տոհմայինք մեր սիրելիք հաճեսցին քաջալերել զմեզ յայս գործ որ թուի մեզ թէ չիցէ առանց օգտի , մանաւանդ ի պէտս դպրոցաց յուսումն ազգային լեզուին , որ է մին ի կարեւորագոյն մասանց դաստիարակութեան Հայ մանկուոյ :

ԽՆԱՄԱԿԱԼԻՔ ՀԱՆԳԻՍԻՍ



## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՅԻՄՈՒԽԵԱՆՔ

Տալ համառօտ ինչ տեղեկութիւն զՅիսուսեանց կարեւոր թուեցաւ մեզ այնու մանաւանդ զի այլ ընդ այլոյ իմն են կարծիք զնոցանէ : Են որ մինչեւ յերկինս բարձրացուցնեն զնոսա . են եւս , և աւելի բազումք , որոց ատելի է անուն խոկ ընկերութեանն , մինչեւ լինել յառակս առ մեօք՝ Յիսուսեանս կոչչել արս մեղմեխս որ նենդաւ և մանդաւ լարեն որոգայթս այլոց : Ամենայն ինչ յառախ ունի զիւր բարւոք և զյոռի կողմն , և չէ արդար և կորովի մոտաց զմի եւեթ կողմն աեսանել և զմիւսովն առնել զանց : Յիսուսեան ընկերութիւնն է մին ի նշանաւոր գիտաց ի պատմութեան Յւրոպական տղ-

գաց : ԶՅիսուսեանց ճառէ ոչ դոյզն հմտութեամբ Ամերիկացին Տրերէր , այր արդարեւ հմուտ Եւրոպական իրաց : Հասուածս քաղեալէ ի գրոց նորա ուր պատմի ոճով իմն և մանր յառաջադէմն զարդանալ Եւրոպաց ի սկզբանէ անտի մինչեւ ցարդ :

Հաստատութիւն կարգին Յիսուսեանց տռանձինն կոնդակաւ պատին Պաւլոսի Ե.ի , յամին 1540 , եղեւ , ասէ նոյն այր , հզօրագոյնն ի զինուց որ արկան ի կիր ի մն դարու ընդդէմնորոց սկզբանց և կարգաց որոց ետուն մուտ և ծուալումն բազում դէպք , մանտուանդ գիւտ տպագրութեան արուեստին և շարժումն այն մեծ ի ձեռն Լոթերականութեան :

Ընդհանուր վանահայր ցկեսնս և հնազանդութիւն նման իբրեւ Աստուծոյ . այս էր հիմն սահմանադրութեան կարգին : Հնազանդել աւագաց , տռանց ընդ բանս ինչ ածելոյ , ամարեալ էր կարեւորագոյնն ի կանոնաց ընկերութեանն , և զսոյն խոստանացր հրամարակու անդէն ի սկզբան ամենայն անձն որ մասնէր յուխտ : Հանդերձ այսու ուխտէր և զամուրութիւն , այն է հրամարել յամուսնութենէ և ի մերձաւորութենէ ընդ կանայս , և լինել անինչ , այսինքն չունել ստացուած կամ սեպհականութիւն , զի ամենայն ինչ պարտէր լինել հասարակաց , և իւրաքանչիւր ոք ունէր իւրաւունս վայելելոյ յամենայնէ որ ինչ ընկերութեանն էր : Թուղ զհնազանդութիւնն առ աւագս , ամենայն մասնձն , ի հարկէ կոչմոն իւրոց իբրեւ զինուոր ընդ հրամանատարութեամբ Պապին , ճանաչըլ զանձն պարտական լինել կազմ և պատրաստ ի կատարումն հրամանաց նորա , և տալ նմտ պատասխանի անձամբ և ոչ միջնորդաւ : Զիսյին առ նոսա ժամադիր ժամք ոչ հասարակաց և ոչ առանձինն աղօթից . իւրաքանչիւր ոք կայր յազօթս յորժամ և կամէր : Եւս իմն նուիրսկան էր նմա և պարտ իսկ քարոզել և ուսուցանել , մանաւանդ վիսնեկունս իբրեւ վարդապետ և դաստիարակ ի վարժս դպրոցաց . և այս խորհրդով իմն և խմստութեամբ ըստ առակին՝ թէ յոր կողմն և միտէ ծառն ի մաստալութեան , ի նմին և կայ : Այսպէս ի ձեռն դաստիարակութեան Յիսուսեանց , իբրեւ իւրոց Զերմագոյն արքանեկաց , պատրաստէր Հոռմ իւր սերունդ հաւատարիմ : Եւ զի ամենայն այր Յիսուսեան ըստ

ուխտին պարտէր երթալ յո՛ և հրաման լինէր նմա , չգոյր  
տեղի սւր չը ոք ի նոցանէ : Այսպէս դիւրին եղեւ Հռոմաց  
նազօք ունել մուտ յամենայն անկիւնո երկրի , և լինել ծա-  
նօթ և հաղողով իւրոց հաւատարիմ որդեկաց բնակելոց ի մէջ  
անհաւատից և հերետիկոսաց :

Իրեւ արդարեւ բարերարոյք , զգաստք , քաղցունք ,  
խնամուք , մարդասէրք , և յայսր ամենայնի վերայ փարժք  
եւս յուսմունս գիտութեանց ; գտանէին Յիսուսեանք դիւ-  
րաւ մուերմութիւն , նա և ընտանութիւն իսկ , ոչ առ բա-  
րեպաշոս միայն , առ լաւս և առաքինիս , այլ և առ խառ-  
նազանձ մորդկան , առ կարի իսկ ցոփս և խառնագնացս :  
Մեծ էր յսցը Յիսուսեան , մանաւանդ վասն զգաստն և  
պարկեշտ վարուց նորա , վատահութիւն կանանց որ գիմէին  
յաճախս առ նա իրեւ առ խմաստուն խորհրդական , ար-  
դահատող և միմիթարիչ , ոչ միայն ի վիշտս և ի նեղու-  
թիւնս իւրեանց , այլ և յուրախութեան և ի յաջողուածս ,  
և չելսնէին ունայնաձեւն ի յետին կարօտութեան : Ի ձեռն  
կանանց բազում խմիք , նա գրեթէ ամենայնի , լինէր տեղեակ  
Յիսուսեանն : Զիք ինչ զոր ոչ հանցէ ի վեր կին մարդ այնմ  
զոր ոչ սիրէ միայն , այլ և մեծարէ իրեւ զայր Ասոուծոց ,  
և յորմէ հաւատոյ թէ ոչ ծածկի ինչ : Խօսի նմա ոչ զառանին  
իրաց միայն , զառնէն և զորդւոց , այլ և զաղգականաց և  
զբարեկամաց , զգրացեաց և զմերձաւորաց , զժանօթից և  
զօտարաց : Այր եկեղեցական , մանաւանդ որ համբաւեալն  
է զգաստութեամբ և առաքինութեամբ , յորոց աղօթիցն  
զօրութիւն իրեւ ի սքանչելիս ապաւինի ռամիկն , է յի-  
րաւի և արժանի առ բարեպաշտ կնոջ այնպիսի՝ որպիսի էր  
Նվիա առ Սարեկիթացւոյն , և Եղիսէ՝ առ Սոմիացւոյն : Սպա-  
շեն ինչ զարմանք թէ Յիսուսեանն իրեւ հոգեւոր հայր իւ-  
րոցն՝ գիտակ լինէր ի ձեռն կանանց , ոչ բռնաբար ինչ կամ  
խորամոննկութեամբ կորզելով գաղոնիս , այլ ի հարկէ իմն  
իւրոց սլաշտամանն , ամենայն անցից անցելոց ի տունս , ի  
խանթի , ի վաճառանոցի , ի փողոցս , ի հրապարակի , ի  
քաղաքի . և կինն տայր նմա գտղոնիս , ոչ առ շատխօսու-  
թեանն որ ընդարայս է կանանց , այլ առ խղճին : Բնութիւն

և յօրինուած Յիսուսեան ընկերութեան և հանգանանք մը-  
տաց և բարուց յայնժամու մարդկանն էին որ ի հարկէ ծնու-  
ցանէին այսպիսի արդիւնս : Մեղադիր լինել ընկերութեանն  
վասն այսր այնպէս է որպէս թէ մեղադիր լինէր ոք հրոյ  
թէ ընդէր այրէ , կամ ջրոյ թէ հիմ հեղծուցանէ :

Բայց ոչ այսչափ միայն . ամենագէտն լինել Յիսուսեան  
միանձին անցանէր ըստ չափ : Որպէս չգոյր որոշեալ ժամ  
ազօթից վասն նորա , նոյնպէս և ոչ ուրոյն ճեւ հանդեր-  
ձից և ագանելեաց : Չգոյր ճեւ ընդ որով չէր մարթ գտա-  
նել զայր Յիսուսեան . մերթ ի մոյր դոյլն դրդեկաւ , բո-  
կոտն և բացաւ գլխով , մերթ աղաբողոնաւ փիլսոփոսի ի  
խօսել ծրի ճառս զպէսպէս ուսմանց և զդիտութեանց ի մէջ  
խուսն բազմութեան ունկնդրաց : Հրաման էր Յիսուսեան  
միանձին զօրէն մեծատան կամ իշխանի կեալ մեծաշուք և  
շուայլ : Եղեն ի նոցանէ որ թագ անդամ կասեցին : Մտա-  
նէր նա ամենայն ուրեք անվեհեր , զսզի ի բոյն կալեալ :  
Զկնի մեծի հերձուածացն յԱնդզիա , մինչ լրաեսք տանէին  
մուտ և ել ի տունս զսրոց կասկած էր թէ կային ի հին  
գտանութեան , էր գտանել զայր Յիսուսեան ի կարի խոկ  
կասկածելի տունս , ծպտեալ և թագուցեալ ընդ առաստա-  
լոք , ի մատանի կամ այլ ուրեք ի ծածուկ : Էին նոքա խոր-  
հըրդասուք իշխանաց և գտանուորաց , առ թագաւորս  
մտանէին առէպ և էին ուղղիչք խզմի մոտաց նոցա : Միով  
բանիւ էին զօդ միութեան ի մէջ տէրութեան և եկեղեց-  
ւոյ : Յիսուսեանն , որպէս ասացաք , ի պարտուց մեծի ուխ-  
տին որ էր հնազանդութիւն , ստիպեալ էր զմահ անդամ  
յանձն առեալ երթալ յառաքելութիւն ի մէջ հեթանոսաց  
և հերձուածողաց , ուր օրէնք սահմանէին նմա գլխոց պա-  
տիժ , եթէ անկանէր ի բոււն : Եթէ յաջողէր , շահ էր նմա,  
և եթէ չաջողէր , դարձեալ շահ , զի գործեաց խորովանն  
յօդուտ եկեղեցւոյ որում նուիրեալն էր :

Ահա բարուոք կողմն Յիսուսեան ոգւոյն . տեսցուք այժմ  
ի հակառակէն :

(Մատոնացի յառաջ)

Ա. Մ. Պ.

# ԳԻՏՆԱԿԱՆ

Թէ իջե՞ն ԲՆԱԿԻՉՔ ի ԼՈՒՄՆԻ

Հնուրք գիտութեան չեղեն բաւոկան ցայսօր տալ մարդկոյ գիտել հաւաստեալ՝ եթէ ից<sup>5</sup> շունչ կենդանի ընակեալ ի Լուսնի, յաստեղ անրջոյ և խորհրդոյ, ի տժդոյն արեգական գիշերոյ, որ ի յաւիտենից անտի շրջեալ լոին ի ներքոյ հաստատութեան Երկնից՝ յինքն ձգէ հանապազ զհայեցուածս և զմիտս։ Ոչ արդեօք ասաց Աստուած յարարչութեան անդ՝ եթէ Բնակեսցի և Լուսինդ, և բուսցին ի դմո բոյսք խոտոց, և լցուն չնչաւորք զամենայն ցամաք աստեղդ, և ձկունք զեռասցեն ի ծովս որ ի դմա, և թռչունք շողասցեն յօդս որ շուրջ զդովաւ։ Զիք ինչ ասայեալ զայդմանէ ի գիրս Ծննդոց, որ զինելութենէ աշխարհի ճառեն, և ոչ աւելի քան զոր ետն մեղ ճանաչել ցայս վայր գործի հեռագէտ՝ դիտեմք ինչ այսօր։ բայց մեծի հաւանութեան է գալ աւուր յորում միաք մարդոյ և զօրութիւն աչաց, ի ձեռն ամենահնարի գիտութեան, կարասցեն հատանել զմիջոցն անբաւ, անցանել ընդ ովկիանոսն մեծատարած որ ընդ Երկիր և ընդ Լուսին, և առեալ ի բաց զքովն ընդ որով ծածկի Փերէ տիկին՝ կացցեն ի զին նորանշան սքանչելեաց։

Այլ ի բան կարճաւոտ դիցուք առաջի զոր ինչ մեծազօրն Աստեղագիտութիւն մարթաց ածել ի յայտ մինչև ցմեր աւուրս։

Առ հինու այլք այլ իմն ունէին կարծիս զլուսնոյ։ Պլուտարքոս համարէր կերպարանս ինչ տեսանել ի նման ումանք ասէին ընակել անդ մարդակերպ էից մեծամեծաց և վիթխարեաց, մինչև թզուկս առ նոքօք լինել մարդկան որ ի վերայ Երկրի մատենիկ մի, որ յիսուն ամօք յառաջ շրջէր ի տես ընդ ամենայն Եւրոպա և ի Հերշելէ կարծեր յօրինեալ, զինակչաց Լուսնոյ ասէր ունել թեւս իբրև զչզի և թռչել

որպէս զբագլ ի վերայ ծովակաց արբանեկին : Մերթ համարէր Լուսին որպէս օթեվան զարմանալի , դրախտ երկրաւոր և երկնաւոր միանգամայն , օրհնեալ գաւառ Երկնից , մեծացեալ յորդառատ կենօք , վերադոյն արարածոց բնակութիւն . և մերթ որպէս կայան ահաւոր , անմասն յամենայն պարզեւաց բնութեան , անապատ և լոին , գերեզման իմն գնայուն մոռացեալ ի միջոցի : Յառաջ քան զգիւոտ հեռագէտ գործոց , առ Պլուտարքեաւ մանաւանդ , ոչ սակաւք ի փիլասոփայից միտէին ի նկատել Երկրի իմն ի Լուսնի հանգոյն մերումն ուր բնակիմք . այլ Երկրի և Լուսնոյ նմանութիւն զառաջինն գայր հաւաստեաւ ի յայտ , յորժամ Գաղլիկոսն ուղղէր զնորագիւտ գործին հեռագէտ ի գունդ անդր լուսաւոր , և սքանչանայր արգեօք ի զնին վերանց և ծորոց զորս ի նմայն նշմարէր՝ ըստ նմանութեան անհարթութեանց Երկրի , և ի տես լցանանիստ և մոխրագոյն դաշտավայրաց՝ զօր չէր ինչ նմա անդէս ծովս համարել : Յայնժամ թէսկէտ ոչ չէն մարդաշատ զլուսին կարծել իշխէին սատեղագէտք , այլ ոչ ոք լինէր յերկմիտս վասն բնակելոց ի նմա ոյլակերպ շնչառորաց . յայնժամ սկիզբն առնէին յօրինելոց զառաջին լուսնացոյց տախտակս , և միարանէին ամենեքեան զբիծս մեծամեծս որ ի նմա՝ ծովս հաշուել . և անուանէին զնոստ , ըստ որոց անուանինն ցայսօր , ծով Հիւմորդի , ծով Խոտզդութեան , ծով Պայծառութեան , այլովքն հանգերձ . նյոնարէս և Երինք լուսնականք կոչէին յանուն արանց երեւելեաց , որպէս լեառն Հապուրքեայ , լքառն Պղատոնի , Կոռպէռնիկեայն , և այլոց նոյնպիսեաց :

Ապա տակաւ ի յառաջագէմն զարդանալ հեռագիտի՝ մանր հայեցեալ ի քնին արկանէին զերեսս Լուսնոյ . յաւուրս Լուգովիկեայ ԺԴ. ի եղաւ առաջի շինել գործի մի հեռագէտ հազար ոտնաշափ առ ի տեսանել յայտնագիւ շնչականս ի Լուսնի . բայց որչափ հեռագէտն ի կատարումն անդք ձգեալ հասանէր , նոյնչափ առ սակաւ սակաւ նուտղիր նմանութիւնն ձգրիտ զոր ոմանք յառաջնոց անտի կարծէին ունել Երկրի և Լուսնոյ : ի ձեռն քաջատեսիկ գործեաց յստակ իմն երեւէին յետ այնորիկ վերին երեսք ծովուց Լուսնոյ . և ոչ

ևս էր տեսանել անդ ծով հոսանուտ որպէս ի վերաց Երկրի .  
այլ աւագուտ ամեննեւին , ըլուրս ըիւրաւորս , ձորս և լերինս  
և դաշտս և անհարթութիւնս վայրաց ընդ բնաւ : Աչ երեւէր  
ի նմա ծով ճշմարիտ և ոչ ճակ ստոյդ , և ոչ ջուր լցծ կամ  
ամպացեալ կամ փոխեալ ի ծիւն կամ թէ ի սառն պաղեալ:  
Դարձեալ մանրամանիր զննութեամիք հաստատէր՝ թէ չիք  
զլուսնով օդ համատարած . զի եթէ էր օդ զնովաւ , աս-  
տեղը որ յընթացս կուսնոյ զինի նորա ծածկիցին՝ վասն  
բնելիքեկման լուսոյ յետնիին քան զժամանակ հաշուոյ ի ծած-  
կել իւրեանց , և յառաջէին՝ յերեւել իւրեանց միւսանգամ:  
զոր օրինակ է տեսանել , վասն համատարած օդոյ որ  
չուրջ զնըլիսաւ , զկանիսելն Արեգական և զանտգանել  
յելս և ի մուսս նորա իրեւե տասն վայրկենօք : Եւ առ ի  
չզոյէ օդոյ չէ մարթ լինել անդ և ջրոյ . զի ջրոյ բնութիւն  
ընդ դադարել ճնշման օդոյ անդէն և անդ դառնայ ի չոգի .  
և փորձ իրացն յայտ առնի ի ձեռն օդահան դործոյ .  
զի եթէ ընդ զանդակաւ մեքենային դնիցի բաժակ մի ջուր ,  
ըստ արտաքս հոսել օդոյ ի միջոցէն որ ընդ զանդակաւն՝  
ըւծանի և ջուրն ի չոգի , մինչեւ գրեթէ նուազել : Եւ զի չիք  
օդ և ջուր ի կուսնի , ոչ գոն ասաւ բուստականք և չնչաւորք  
ի նմա հանդպյն երկրաւորաց . զի չէ մարթ նոցա կեալ առանց  
օդոյ և ջրոյ : Այլ թէ իցէ ի նմա այլ իմն ազգ բուսոց և այլ  
ազգ չնչաւորաց կամ մուելոյ , որոց մարթիցի լինել առանց  
ձգելց զօդ կամ զջուր լինելց , վայրմանէ թէսէտ չիք ինչ  
նշանակեալ ասաելզագիստաց , բայց են ոմանք որ կարծ եօք իմն  
ասեն՝ թէ չէ անհնարին գտանել բուսոց և չնչականաց ի  
ձորս անդ խորածորս կուսնոյ , յորս իցէ թերեւս յարդ ,  
առեն , օդ և ջուր կամ օդոյ և ջրոյ մնացորդ յետին , և լի-  
նել նոցա անդ մերձ ի սպառուտած կենաց : Եղեն իսկ ոմանք  
որ վճիռ ետուն՝ եթէ տոգու մի մեռեալ է կուսնի : Ասլա , ի գէպ  
է ասել , էր երբեք յորժամ կենդանի էր . զի անուն մահու  
զերլեմն կենդանութենէ յայտ առնէ :


Բայց միաբանին ամենայն ասուելզագէտք ասել՝ եթէ մար-  
մին հաստատուն է կուսին , և առած եալ զինքեամիք շրջի և  
չուրջ զնըլիսաւ , զօրին արլանեկաց զնոյտւն աստեղց . թէ-

չիք նորա լցու առանձինն , և յԱրեգակնէ գոյ ի նա լցուն . — զայն զայս ընթեռնումք և ի գիրս Նզնկայ . — թէ երկա-  
կտուր լուսնոյ է հաւասար իր երից ի մետասան մասանց  
երկակտրոյ Երկրի . թէ մի կէս մասն լուսնական գնդին ան-  
տես է ի մէնջ , վասն ի նոմին ժամանակի շրջելց նորա և  
զիւրեամբ և' շուրջ զնրկրաւ , և այսու զմի կէսն եւեթ ունի  
հանասլազ հանդէպ Երկրի , այլովքն հանդէրձ :

Իսկ զի դշխոյն Փերէ եղեւ երբեք ասպնջական վանա-  
տու բնակչաց յարքայութեան անդ իւրում , զայտնանէ ,  
քանզի չմիաբանին ամենեքեան , զիարծիս հաւանութեան  
ածցուք ի հանդէս :

Յ. Գ.

(Պատուացի յառաջ)



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՆԱՍՈՒԻՆՔ

#### ՀԱՐԵԱԼՔ Ի ԺԱՆՏԱԽՏԵ

Ախտ որ զերկիւղ սրփոէնդ բլնաւ ,  
Ախտ որ ցամամար երկնից ցուցաւ  
Հանել յերկրէ զվըրէծ թինու եղեռան ,  
Ախտ ժանտ . — զի յիր անուն կո-  
չել է արժան . —

Որ ի միում աւուր լընու զԱխերոն ,  
Զազգս անամոց եհար ուժգին :  
Հարան բողոք , թէ բընաւը ոչ կար-  
ճէին .

Ոչ յայնժամ որ առնէր պաշտօն  
Զօրինասական խընդրել կենացն ըզ-  
դարման .

Գըրզուէր զնոցին քաղց ո՛չ մի կեր ,

Ոչ Գայլ եւ ոչ Աղուէս հայէր  
Յանպարտ եւ քաղցր ինչ ինարակ .  
Խոյս ի միմեանց տային տատրուկր .  
Ոչ զոյր նոցա սէր , ոչ բերկրանք :  
Կոչեալ մողով Արիւծն ասէ . Սիրելիք ,  
Մեղաց ի սակս են այս չարիք ,  
Զոր Թոյլ ետուն զալ երկնից կամք .  
Թո՞ղ որ մեղաւ րան զամենայն՝  
Սպանցի՝ նետից աստուածասատ  
բարկութեան .  
Բըդըշլութիւն ածցէ Թերեւս համբերէն .  
և սոյնզունակ ինչ պատահարս վէպր  
ասեն

Նըլիրել զանձն ի գոհ արդար :  
Մի՛ լիցի մեզ պատրել զանձնս . ա-  
նաշառ  
Արացուք , օ՞ն , սըրտից հանդէս:  
Ես , ի յագուրդ անլիր անյազ որկորս.  
տիս ,  
Բեկեալ կերայ ոչխար պէսպէս ,  
Ոյց չէր գործեալ չար ինչ ընդ իս .  
Եհաս ուտել ինծ եւ երբեմն ի դիպաց  
Զիսաշնարած :  
Ապա տաց զանձն , իցէ թէ հարկ .  
այլ թըլի՛  
Անձնիւր ումեր է զօրէն իմ յիրավի  
Խօսել զանձնէ . զի արդար է զըրաւել  
Ում պատժապարտն է առաւել :—  
Արբա'յ , Աղուէսն ասէ , դու յոյժ  
ես քարի .  
Փափուկ է խիղճ , աղէ , մըտաց քոց  
կարի :  
Եւ զի՞նչ . ուտել զոչխար , զամբոխ  
խածամուժ  
Իցէ՞ ինչ մեղ . ո՞չ երբեր . տէր , լի-  
ցի յուշ  
Զ՞ի թէն լափել է շուր նոցին .  
Այլ զգհովուէն ասել մարթի  
Թէ բնաւ չարեաց էր արժանի .  
Զի էրն յորոց անբանաւորն աշխարհի  
Յընորիւր իմն իշխել կամին :—  
Օրինակ զայս նառէր Աղուէսն , եւ  
հարին  
Սուտակասպասք ծափ ըզծափի .  
Ոչ ըզբուանց յանցանս ծանունս որ  
Ժըտէր  
Քըննել , զԱրջոյն եւ ոչ զՎագեր .

Եւ ամենայն կըրուարարաց , նո՞յն  
եւ Շան ,  
Լեալ ի չըբմելս ասէին ոչ զանձանց  
բան :  
Մատեաւ յառաջ Եշն եւ ասէ . Ածեմ  
յուշ  
Զի յանցանել ընդ մարգ ուրուք  
Վանականի՞ քաղց , ժամ դիպող ,  
խոր փափուկ  
Եւ ի դիւէ դըրդումն յիս յոյժ  
Ետուն կորզել ինծ իմարգէն բերան մի .  
Յայտ ասացից , ոչ էր ինծ այն յի-  
րափ :—  
Առ այս՝ Ի դա' , ի դա զոչեն անդ  
բոլորք .  
Գայլ ոք դըպիր երկայն նառիւր ցոյց  
իւրովք՝  
Զի գոհնել պարտ էր զանիծեալ կեն-  
դանին  
Կունդ եւ քոսոտ , յորմէ չարիք բնաւը  
հասին :  
Զայն մեղ չընչին զրէին նըմա յոնիր  
մի .  
Ուտել զայլոյ խո՞տ , զի՞նչ վընաս  
գարշելի .  
Թէ մահ հեեթ զօրէր նարտար  
Քաւել ըզմեղն , անդէն ցուցին զայն  
ինչ լաւ :  
Ըստ լինելոյ քում մեծազօր կամ չը-  
ւառ՝  
Վճիռ ատենի տացի սպիտակ քեզ  
կամ սեաւ :  
ԼԱՖՅԵՆԹԻՆ  
8. Գ.

## ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

### ՀԱՅԵՐԻ ՀԵԶՈՒԻ

Ոչ ինչ ընդհատ ի հասարակաց օգտէ, որպէս ասացաք ի սկզբան անդ, դիտաւորութիւն մեր է պատահնի եւ օգտակար առնել զշանդէսս մանկուոյ դպրոցաց յուսումն հայրնելի բարբառակ : Նովին խորհրդով աւասիկ սկիզբն առնեմք յօրէ աստի եւ անդր դնել միայար առաջի ընթերցանելեաց Հանդիսիս ԶԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՍ ՀԱՅԵՐԸՆ ԼԵԶՈՒԻ, զընտիր ընտիր ասացածս սոկեղինիկ մատենագրութեան մերոյ, հանդերձ օրինակօք զոր չան յանձին կալաք քաղել ընտրանաւ :

Վաստահ եւմք՝ եթէ նպաստ ոչ դոյզն լիցի եւ այս որոց ցանկանն ի սեպիտական բարբառ ազգային յօրինել ինչ կամ թարգմանել, կամ մուծանել մեղմով զազգի ազգի ազնուութիւնս հնոյն ի նոր հայերէնն՝ առ ի սրբել զամ տակաւ յամենայն օտարոտի եւ ի խառնազանն խօսից : Զի չէ իմաստութեան անառաջնորդ թողով զանտեղիակն ուղւոյ, կամ տարածամ հառուցանել զմանուկն ի ստենէ մօր իբրոյ :

Յ. Գ.

### Ա.

**ԱԶԴ ԱՌԵՆԵԼ .** ինչ արածիք ինձ (1) : — \*Ազդ արածոջիք ինձ (1) : — \*Ազդ արարին ի տուն թագուուրին :

**ԱԶԴ ԼԻՆԵԼ .** ինչ արածոջիք : \*Ազդ եղեւ Մուրթքէի բանս այս : — \*Ազդ եղեւ ինձ վասն ձեր : — \*Գուցի ազդ լինիցի լմնիջի ի Գիթ :

**ԱԼԻՍ ԱՌԵԼ .** ճերացնել : \*Բարեկեցութիւն . . . տարածամ ալիս ածէ :

**ԱՌԵԼ ԶԲՈՑՎ .** իրակե անցնել : \*Ածէին զրտցով զմանկունս իւրեանց :

**ԱՌԻՄ ՃՆԴ ԲԱՆՍ .** դարակուուրիլ . դէմ կենալ : \*Առանց ընդ բանս ինչ ածեց :

**ԱՌԵԼ ԶՈՔ ԶԱԻՐԵՒԻ .** սէրու շահել . իբեն +անէլ : Դէմ ըստընէլ : \*Եթէ կարիցիմք, դիւրաւ ածեմք զնս զմեօք :

— \*Կարիցես ածել զնս զքեւ : — \*Ածել զնս զիւրեւ :

**ԱՌԵԼ ԶԱՆՍ .** յայն հանել : \*Զուլ զտու զձայն ածէր : — \*Զշան ձայն թերեւս ջտնայցէ ոք ածել :

(1) Այսու նշանաւ (2) բերեմք ի մէջ զօրինակս յրնտիր նախնեաց :

ԱԿԱՆ ՀԱՏԱՆԵԼ . Ճակ կամ ի՞ս բանալ : \*Ուր գողք ական հատանեն և գողանան : — \*Ոչ տայր ական հատանել զտան իւրոյ : — \*Չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում :

— Նմանութեամբ՝ ուշչին պարիելառան ըստուել : \*Գցածութիւնն իւրեւ գող ական հատանես :

ԱՌ ԱԿԱՆԵ . էրեսպաշտութեամբ . էրեւանց : \*Մի՛ առ ականի ծառացել իրեւ մարդահամայք : — \*Մի՛ առ ականի ծառայութեամբ :

ՅԱԿԱՆ ԱՆԿԱՆԵԼ . աչք էրեւանալ : \*Բողից են պաճուճանք , որք յակն եւեթ կամին անկանել : — \*Մի՛ եւս յաւելցես դու անկանել յակն իմ :

ՅԱԿԱՆ ԱՐԿԱՆԵԼ . էրեւցնել : \*Զերեսս նոցա ինձ յակն մի՛ արկանիք :

— Կամ՝ աչք անցնել : \*Ավաշեմ զամենեսեան որ զգիրսդ յակն արկանիցեք :

ՅԱԿԱՆ ԱՐԿԱՆԵԼ . էրեսէ յիւլ . աւանել լունել : \*Յընտոնեաց զաւակի քոյ զակն մի՛ արկանիցես : — \*Արկանէր զակն իւր (առիւծն) յալեւորէ անտի , զի մի՛ երկեցուացէ :

ՅԱԿԱՆ ԱՌՆՈՒԼ . աչք վան ըլլալ : \*Մեծապէս արքայ Շապուհ յակն առեալսիրէր զնա : — \*Գանհալից առնէ զորդի զոր յակն առնու :

ԱԿԱՆ ԱՌՆՈՒԼ . էրեսպաշտութեան ընել . նկառել : \*Ակն առեր երեսաց ոմանց : — \*Մի՛ առնուցուս ակն ի դատաստանի : — \*Ակն աղքատի մի՛ առնուցուս : — \*Ակն առնուլ ամզարշտի չյ՛ բարւոք :

— Կամ՝ ընդունիլ (ինդունաժը) : \*Ակն առնուլ աղօթից : \*Ակն առնուլ յանցանաց (յանցանին ընայել) :

ԱԿԱՆ ԴՆԵԼ . աչք անկել : \*Ոչ ոք իցէ որ ակն դնիցէ երկրին քում : — \*Ակն ետ նոցա հայեցուածովք աչաց : — \*Մի՛ ամենեւին յայլոց ինչ ակն դնել :

ՅԱԿԱՆ ԳԱԼ . աչք առկ իյանալ . հաճնելլ ըլլալ : \*Որ յակն դայլին՝ տանէր առ ինքն :

ԱՌ ԱԿԱՆ ԴԻՊԵԼ . աչքն հանդիպէլ : \*Յամենայն ինչ տարբեղն որ առ ական դիպեցան :

ԸՍ ԱԿԱՆ ԱՆԿԱՆԵԼ . աչքն աներեւցն ըլլալ : \*Նայէր թագա-

ւորն և տեսանէր, զի ըստ ակն անկանէին, մինչ զի ոչ երեւէին նշանքն Մուշեղի:

ԶԱԿԱՄԲ ԳԱԼ. • աւը միաժնել: \*Ցործամ արքեցաւ, և զինին եկն զակամք նորա:

ՃԱՐՊՈՅ ԶԱԿԱՄԲ ԳԱԼ. • աւը դառնաւը. ավին ուրը կորսուէլ:

\*Ճարպոյ եկեալ զակամք՝ յայլայլութիւն մտարերէին:

ԸՆԴ ԱԿՆ ԽՈՑԵԼ. • յայդնապէս զբանորէլ (ի օստով): \*Զագահս չկամիմ ասել, զուցէ ընդ ոմանց օր տատ խոկ կոյցեն՝ ընդ ակն խոցիցեմք:

ԸՆԴ ԱԿԱՄԲ ՀԱՅԵԼ. • ձուռ ավովն նայէլ: \*Որ շուրջ զմեօք՝ ընդ ակամի հայէին ի մեզ: — \*Ծնդ ակամի հայէր Սաւուղ (ի Դումիթ):

ԱԿՆ ԱՄԵԼ. • իպնէլ. +աշունէլ: \*Սաւուղ ակն ածէր յերեսաց նորա: — \*Ոչ ակն ածէին ի ծերոյն:

— կամ՝ աւը զբան ըլլաւ. հոդ գանէլ: \*Առ զգա, և ակն ած ի վերաց դորա: — \*Եկ, և ածից ի վերաց քո ակն:

ԱԿՆԿԱՌՈՅՑ ԼԻՆԵԼ. • ավը գոկած նայէլ: \*Մէծ ապէս զարմոցեալ՝ ակնկառաց լինէր:

ԱԿՆ ՈՒՆԵԼ. • պատուել. յուռաւը: \*Այս այն օր է որում ակն ունէաք: — \*Ակն ունէին ջրոցն յուզելոց: — \*Մի՛ ակն կալցի մարդն այն առնաւլ ինչ յԱստուծոյ: — \*Ակն ունէլ ի Տեառնէ զյալթութիւն:

— կամ՝ ուղիւլ. կարծել: \*Եւ զայս ոչ եթէ ես ինչ ակն ունիմ՝ ի հասուցման վարձուցն վնասեալ գտանել: — \*Մի՛ այդպէս ակն ունիցիք՝ թէ մեք չնորհեմք ինչ ի վլայել անդր:

ԱԿՕՍ ԿՈՏՈՐԵԼ. • ՀԱՏԱՆԵԼ. ԶԳԵԼ. • հերէլ: \*Ոչ զերմիր դործէր և ոչ ակօսս կոտորէր: — \*Ի խորս մտաց ձերաց հատէք ակօսս: — \*Զգիցիք՝ ակօս ի դաշտի քում: — \*Զսիրտ իւր տացէ ի ձգել ակօս:

ԱՀ ԱՐԿԱՆԵԼ. • վախցնել: \*Զի մի՛ թուեցայց իրբեւ ահ ինչ արկանել ձեզ թղթովքս:

---

### ԽՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՍ